


Quick Report

Համընկա՞ն արդյոք դասընթացից ձեր սպասելիքները արդյունքների հետ:

	այո	ոչ	մասամբ	այլ	Խնդրեմ գրեք ձեր կարծիքը, եթե կարիք կա	Standard Deviation	Responses
All Data	15 (75%)	0 (0%)	4 (20%)	0 (0%)	1 (5%)	5.69	20




Text Responses

Սպասվածից ավելին էր

Ստացաք արդյո՞ք բավարար գիտելիքներ կամ գործիքներ, որոնք կօգնեն լուծել ձեր կազմակերպության խնդիրները և կամ զարգացնել ծրագրեր:

	այո	ոչ	մասամբ	այլ	խնդրեմ բերեք մի օրինակ գիտելիքի կամ գործիքի, որը հիշվեց: Կամ նշեք, ինչ կուզենայիք ստանալ ու չստացաք:	Standard Deviation	Responses
All Data	15 (75%)	0 (0%)	3 (15%)	0 (0%)	2 (10%)	5.62	20



● այո
 ● ոչ
 ● մասամբ
 ● այլ

● խնդրեմ բերեք մի օրինակ գիտելիքի կամ գործիքի, որը հիշվեց: Կամ նշեք, ինչ կուզենայիք ստանալ ու չստացաք:


Text Responses

Շրջված դասարան

Ջետաքրքիր էր կրթական համակարգի հետ փոխազդեցությունների սխեմատիկ պատկերումները, որը առավել հստակ էր դարձնում ԶԳԿ-ների դերն ու նշանակությունը, ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ընդհանրություններն ու տարբերությունները:

Արդյոք դասընթացին ներկայացված կոնցեպտները՝

	Նոր էին	հիշվող էին	կիրառելի էին	նշվածներից ոչ մեկը	այլ	Խնդրեմ նշեք մեկ կամ ավելի գաղափար, որ ձեզ համար Նոր էր, հիշվող կամ կիրառելի	Responses
All Data	5 (25%)	7 (35%)	14 (70%)	0 (0%)	0 (0%)	3 (15%)	20



Text Responses

Նոր էր՝ Նոր կրթական համատեքստի ազդանշանները (ամբողջականացրեց մինչ այդ ունեցած ինֆորմացիան): Ռեֆլեքսիայի Նոր տարբերակ էր, որը հիշվեց և կիրառեմ կիրառելի:

Քաղաքականության մշակման և իրականացման մոտեցումներ:

Առավել տպավորվել է հանրակրթության առկա ճգնաժամային վիճակին վերաբերող փաստարկները, մասնավորապես, Աշոտ Բլեյանի կողմից հանրակրթական դպրոցներին տրված գնահատականները: Կիրառելի են կրթության ոլորտում քաղաքականությունների մշակման առաջարկված ուղիներով առաջնորդվելը, մասնավորապես, մասնակցությունը օրենսդրական նախաձեռնություններին: Ընդհանրապես, դասընթացի ընթացքում տրված տեսական գաղափարների շուրջ բանախոսները ներկայացնում էին օրինակներ իրականությունից, որը բարձրացնում է գիտելիքի կիրառելիության աստիճանը:

Կրթության խնդիրները 21-րդ դարում (Գևորգ Տեր-Գաբրիելյան, Միքայել Յովհաննիսյան և Նունե Դիլանյան)



Քաղաքականության վերլուծության հիմնական հասկացությունները, քաղաքականության մշակումը, իրականացումը և դիսկուրս (Աննա Գևորգյան)



Քաղաքականության վերլուծության արդյունքում առաջարկներ ձևավորելու և հասցեատիրոջը հասցնելու միջոցները ու գործիքները (Էլինար Վարդանյան)



ՔՀԿ ինստիտուցիոնալ զարգացման կարևորությունը (Գայանե Մկրտչյան, Միքայել Յովհաննիսյան)



Նոր տեխնոլոգիաները կրթական ՀԿ-ների կարողությունների զարգացման համատեքստում (Արտաշես Թորոսյան)



Կրթության կառույցների ամփոփ նկարագիրը, ոլորտի օրոնքները և ռեֆորմները (Նունե Դավթյան)



Դասընթացի երկու օրերի ռեֆլեքսիաները (Նունե Դիլանյան)



Դպրոց-համագործակցություն-նորարարություն (Աշոտ Բլեյան)




Հանրակրթության որակի հիմնախնդիրները, որակի գնահատման գործիքները և միջոցները (Նունե Դավթյան)



Ձևավորվեցին արդյոք կապեր, որոնք կարող եք օգտագործել հետագայում՝ մասնագիտական զարգացման, նոր ծրագրերի մշակման, իրականացման նպատակով և այլն:

	այո	հնարավոր է	ոչ	խնդրեմ բերեք օրինակ	Responses
All Data	10 (50%)	9 (45%)	0 (0%)	4 (20%)	20



Text Responses


Թայիլի կանանց ռեսուրս կենտրոնի տնօրեն Գայանե Խաչատրյանի հետ. համագործակցության տարբերակ սոցիալական ձեռնարկատիրության բաղադրիչով ARMACAD, ԱՍՏՂԱՅՈՒԼԸ, ՍՈՍ ԽԱՉԻԿՅԱՆ

Ոլորտում նորարարական մոտեցումներ կիրառող այլ կառույցների հետ համագործակցելու հնարավորություններ

Դասընթացների ընթացքում ԶՅԿ-ների ներկայացուցիչների հետ ծանոթությունը, մտքերի փոխանակումները հիմք են հանդիսանում հետագա համագործակցության համար, մասնավորապես, Արտաշատում, Գյումրիում և Եղեգնաձորում կարող ենք նախաձեռնել համատեղ նախագծեր:


Ինչպիսի՞ն է կիրառված մեթոդների օգտակարությունը (նշել ըստ օգտակարության 1-5 որտեղ 1-ն ամենաքիչ օգտակարն է, իսկ 5-ն՝ ամենաշատ)

	Ներկայացում (բանավոր խոսք)	Գործնական աշխատանք խմբերում	Ազատ քննարկում	Ռեֆլեքսիաներ	այլ	Responses
All Data	11 (55%)	15 (75%)	10 (50%)	8 (40%)	1 (5%)	20



Կցանկանա՞ք արդյոք մասնակցել ԵՀՀ-ի կողմից կազմակերպված նման այլ միջոցառման:

	այո	ոչ	հավանաբար այո	Standard Deviation	Responses
All Data	18 (90%)	0 (0%)	2 (10%)	8.06	20



● այո ● ոչ ● հավանաբար այո

Բերեք խնդրեմ մի օրինակ թեմայի, որի վերաբերյալ կուզեիք զարգացնել ձեր գիտելիքը կամ հմտությունը:

Text Responses

Սոցիալական ձեռնարկատիրություն

3

Նոր տեխնոլոգիաները կրթական ՅԿ-ների կարողությունների զարգացման համատեքստում

Օրենսդրական նախաձեռնություններ, ինտերնետային գիտելիքներ և տեխնոլոգիաներ

Նոր կրթական տեխնոլոգիաների կիրառում հանրակրթության ոլորտում: Մեղիա կրթություն: Կրթական քաղաքականությանը վերաբերվող այլ դասընթացներ:

Հանրակրթության որակի հիմնախնդիրները և որակի գնահատման նոր գործիքներն ու մոտեցումները

Ֆոնդայթայթում

Կրթությունը տեխնոլոգիաների միջոցով

ԿՐԹԱԿԱՆ ԻԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ռեսուրսների հայթայթման նորարար միջոցների մասին, ստեղծել փորձի փոխանակման հարթակներ, ԶԻԿ-ների կոալիցիաներ և ցանցեր

Ֆոնդայթայթում, ծրագրի առաջարկ գրել, ոլորտային մասնագիտական վերապարաստումներ, սփյուռքի հետ կապերի հաստատման ուղիներ,

Կրթության ոլորտի մոնիտորինգի, ծրագրերի ազդեցության գնահատում, Հետազոտության մեթոդներ

Կրթության ֆինանսավորման նոր քաղաքականության վերլուծության մեխանիզմների վերաբերյալ:

Ֆոնդերի հայթայթում և դրամաշնորհներին պատրաստում

Կրթական ոլորտի դրամաշնորհների դիմելու կարողություններ, հմտությունների զարգացում:

ուսումնական մեղիա նյութերի պատրաստման ծրագրերի ուսումնասիրություն

Ծրագիր գրելու հմտության զարգացում


<Հանրակրթության որակի հիմնախնդիրները, որակի գնահատման գործիքները> թեմայի շուրջ կցանկանայի ընկերակցի միջազգային փորձը, ուղենշել ՀՀ-ում տեղայնացման հնարավորությունները:

Բարձրագույն կրթության հիմնախնդիրները

Քաղաքականության մշակում

Ինչպե՞ս եք պատրաստվում տարածել ինֆորմացիան այս միջոցառման մասին ձեր մասնագիտական շրջանակում:

	● Բանավոր կասեմ	● Սոցիալական մեդիայում կպատմեմ, լուսանկար կդնեմ	● Կառաչարկեմ իմ մասնագիտական շրջանների անդամներին հետևել ԵՀՀ-ի և ՀԲԸՄ-ի միջոցառումներին, մասնակցել	● Այլ	Standard Deviation	Responses
All Data	1 (5%)	0 (0%)	17 (85%)	2 (10%)	6.96	20




● Բանավոր կասեմ ● Սոցիալական մեդիայում կպատմեմ, լուսանկար կդնեմ

● Կառաչարկեմ իմ մասնագիտական շրջանների անդամներին հետևել ԵՀՀ-ի և ՀԲԸՄ-ի միջոցառումներին, մասնակցել ● Այլ

Պատրաստվում է՞ք արդյոք կիսվել ստացված գիտելիքներով/գործիքներով ձեր գործընկերների հետ:

	այո	ոչ	Standard Deviation	Responses
All Data	20 (100%)	0 (0%)	10	20



Միջոցառման ո՞ր պահն էր, որ առանձնակի հիշվեց:

Text Responses

հիմնախնդիրների վերհանում

Կրթության խնդիրները 21-րդ դարում դասընթացը

Ռեֆլեքսիաները

Համատեղ աշխատանքները

Հրանտ Սարգսյանի բնապահպանական կրթման անհրաժեշտության թեմաներով «ճնշումը»: ;) ԵՎ Հրանտ Սարգսյանի հնարամտությունը իր առաջարկած թեման գործնական աշխատանքներում ընդգրկելու կապակցությամբ:

ԶԻԿ ինստիտուցիոնալ զարգացման կարևորությունը (Գայանե Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան)

Խմբային գործնական աշխատանք, ազատ քննարկում

Խաչիկ Գևորգյանի ներկայացումը

Խմբերի կողմից ներկայացված ծրագրերի գնահատումը

Եվրասիա Համագործակցության հիմնադրամի գործունեության ու ծրագրերի հետ ծանոթանալը, ինչպես նաև այլ ԶԿՀ-ների հետ ծանոթությունը

Միջոցառումն, ընդհանրապես, լավ էր կազմակերպված: Ընտրված էին լավ ՚իրենց գործին գիտակ դասընթացավարներ: Թեմաները նույնպես կարևոր էին ու օգտակար: Ընդմիջումը նույնպես լավ էր կազմակերպված, բայց ինձ համար առավել կարևոր էր և տպավորիչ աշխատակիցների, աշխատակազմի, դասընթացավարների, կազմակերպիչների միմյանց նկատմամբ ունեցած հարգալից, բայց ազատ ու անմիջական վերաբերմունքը, միասնական գործելու կարողությունը: Մկրտչյան Գայանեի սահուն անցումներն ու սպառիչ պատասխանները: Շնորհակալություն ողջ թիմին:

Խմբային քննարկումները

քաղաքականության և տեսական վերլուծությունների ռեֆլեքսիաները

Պրն տեր-Գաբրիելյանի խոսքը

Խմբային աշխատանքը:

Բոլոր փորձագետների ներկայացումները

ռեֆլեքսիա

Դասընթացավարների արհեստավարժ մոտեցումը, դասընթացի որոշ հատվածներում մասնակիցների կողմից շեղող առաջարկները շրջանցելիս և իհարկե վկայականների բաշխման պահը:

Ազատ քննարկումները, մտքերի փոխանակումը

Աննա_ Զաղաքականության

Լ2Էք 1-2 ուսուցման կարիքներ, բացեր, որ ձեր կազմակերպությունը ունի:

Text Responses

, Յանրային կապերի զարգացման նոր մեթոդներ, ծառայությունների մշակում, շահերի պաշտպանություն, Ֆոնդահայթայթում

Յանրային իրազեկման կարողություններ

Բարձրակարգ թրեյներների կարիք և խորհրդատվություն

Օրենսդրական նախաձեռնություններին ակտիվ մասնակցություն, դրամաշնորհների մասին տեղեկատվություն

Վերապատրաստումներ, համագործակցության նոր հնարավորություններ

Ծրագրերի կազմում, ֆինանսների հայթայթում

Տեխնոլոգիական գինվածություն, միջազգային համագործակցություն

Ֆոնդահայթայթում

Յամապատսխան սարքավորումներ ուսուցումը նաև տեսանյութերի միջոցով կազմակերպելու և ստացվածգիտելիքներն ամրապնդելու համար

Շահերի պաշտպանություն , կայք էջի բացակայություն, ոլորտային մասնագիտական վերապատրաստումների պակաս, որոշ փաստաթղթերի մշակման կարիք մոնիտորինգի,ծրագրերի գնահատում

Նոր քաղաքականությունների առաջարկների կազմման հմտություններ, ֆոնդահայթայթման նոր գործիքների իմացություն:

Ծրագրի զարգացման մասնագետ և գրանտներ գրելու մասնագետ

Գործընկերներ, դրամաշնորհներ

Կաչծում եմ, որ Կառավարության հետ շփվելու, կապեր հաստատելու հմտությունների պակաս կա

համագործակցություն ավելի հմուտ ՅԿ-ների հետ

Կազմակերպության կողմից կատարված աշխատանքների ներկայացման հմտությունները բավարար չեն: Կազմակերպությունը չունի կայք, իսկ համացանցում առկա էջը պատշաճ մակարդակով չի սպասարկվում:

Բացակայում են:

Տեսական գիտելիքներ, պասիվ թրեյներներ

Խնդրում ենք նշել ցանկացած նկատառում կամ կարծիք այս դասընթացի մասին, որը վերը չի քննարկվել և կօգնի դասընթացը հետագայում է՛լ ավելի արդյունավետ դարձնել:

Text Responses

դասընթացը շատ օգտակար էր, նպաստեց նաև կապերի զարգացմանը մենք՝ Նոր ԶԿ-ների ճանաճեցիկը և Նոր համագործակցություն ձևավորման սկիզբ էր
5

Մատուցված նյութերի տարողունակությունը և ժամանակի սղությունը

Ավելի խորը պետք է լինեին դասընթացները ու ավելի գործնական

Շատ հագեցած, բովանդակալից դասընթաց էր, որ համար շնորհակալ եմ: Դասընթացավարների պրոֆեսիոնալիզմի և ճիշտ կազմակերպման շնորհիվ էր, որ հնարավոր էր Յժամ իրար հետևից լսել և ընկալել: Բազմաբովանդակ էր, ընդգրկում էր կրթության հիմնախնդիրները և դրանց լուծման տարբերակներն ու ուղիները: Նորարական գաղափարներ կային, որոնք դեռ յուրացնելու կարիք կա: Դասընթացը ծանրաբեռնված չէր ոչինչ չտվող «ինտերակտիվ խաղերով»:

Շնորհակալություն արդյունավետ դասընթացի և ստացած գիտելիքների համար:

ստեղծել ավելի շատ ազատ քննարկման եւ մասնակիցների միջեւ շփման հնարավորություն

Լսարանում առկա ձևաչափը (առանց սեղանի աթոռներ, օդափոխություն) հոգևեցնող էր

ԱՆչափ ծնորհակալ եմ իրավերի համար, ստացա բավականին գիտելիքներ և ձեռք բերեցի Նոր կապեր, որոնք վստահ եմ կօգտագործվի ի շահ մեր կառույցի և հասարակության:

Նման դասընթացներ անցկացնելու դեպքում նախընտրելի է թիմային աշխատանքների համար շատ ժամանակ տրամադրել

Միջոցառումը կայացավ: Այն արդյունավետ էր, ասելիքը՝ կարևոր , լեզուն ` մատչելի, դասընթացավարները՝ պրոֆեսիոնալ: Նյութը շատ հագեցած էր , նույնիսկ շատ խիտ էրեք օրերի համար: Գործնական պարապմունքների և շփումների համար շատ քիչ ժամանակ էր տրամադրված, ազատ քննարկման համար գրեթե ժամանակ չէր լինում : Կարծում եմ ներմուծված նյութն առավել կամրակնվել, եթե այդ պահին քննարկման , մտքերի փոխանակման , ավելի շատ խմբային , գործնական պարապմունքների հնարավորություն լիներ : Եվ մի խնդրանք ` հնարավորինս հաճախ կազմակերպեք այսպիսի արդյունավետ , մատչելի և պրոֆեսիոնալ դասընթացներ նույն կազմակերպությունից մի քանի անդամի միաժամանակյա մասնակցության հնարավորությամբ, հատկապես, նորաստեղծ կազմակերպությունների համար: Շնորհակալություն որք աշխատակազմին, միջոցառման կազմակերպիչներին :

Կցանկանալի մյուս դասընթացին ավելի շատ կիրառվեին գործնական աշխատանքներն ու ազատ քննարկումները:

առավել ճկուն օրակարգ

Զիանայի կազմակերպված դասընթաց

Ամեն ինչ լավ էր կազմակերպված, միայն որպես թերություն կարող եմ նշել, որ դասընթացավարների բանավոր խոսքին, ներկայացումներին ավելի շատ ժամանակ էր հատկացված, ինչի պատճառով մասնակիցների հետ քննարկումների, շփումների ժամանակն ավելի քիչ էր:

առաջարկում եմ գրենական պիտույքներ չբաժանել, քանի որ բոլորի մոտ բազմաթիվ նոթատետրեր են կուտակվել, յուրաքանչյուրի մեջ գոռով մի էջ լրացրած: Փոխարենը, ուղղակի նախապես կարելի է խնդրել, որ յուրաքանչյուրը իրենը բերի... :Ճ...վկայականներն առաջարկում եմ էլեկտրոնային ուղարկել յուրաքանչյուրին... իսկ ավելի լավ է՝ ստեղծել թրեյնինգներ կազմակերպող կազմակերպությունների միասնական պորտալ, որտեղ յուրաքանչյուր ԶԿ պրոֆիլ կունենա և որտեղ թրեյնինգ կազմակերպած Կառույցներ կարող են առցանց բեռնել վկայականները: Զնարավոր է, որ դրանով էլ մի օր ԶԿ-ների ռեյթինգը չափվի...կամ , օրինակ, ԶԿ-ի CV- նման մի բան..

կազմակերպել դասընթացները ոչ աշխատանքային օրերին

Ընդհանուր առմամբ, տպավորիչ, արդյունավետ և շատ օգտակար դասընթաց էր: Այնուամենայնիվ, կցանկանայի գործնական աշխատանքները, ինտերակտիվ խաղերն ավելի շատ լինեին, սակայն ոչ թե կատարված աշխատանքների հաշվին, այլ ավելի ժամանակ տրվեր մասնակիցներին փոքր խմբերով կամ զույգերով քննարկումների համար, իսկ դա նշանակում է օրակարգը առնվազն 1 օրով ավելացնել: Թեև առանց դրա էլ շատ լավ դասընթաց էր, որի համար շնորհակալ եմ:

Բացակայում եմ:

Ընտրել ավելի երիտասարդ մասնագետների, ավելի պրակտիկ վարժություններ, Էներջայզերներ